ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԳՀԱՊՁԲ-2018/16-1-1-ԵՊԲՀ»

ք.Երևան

« 15 » « փետրվար » 2018թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա.Ա.Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Մեդտեխսերվիս» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա.Մանուկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 42.075.000,00 /քառասուներկու միլիոն յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող N 1-5 չափաբաժիններում ներառված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքի տեղադրման պահից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել

ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	«Մեդտեխսերվիս» ՍՊԸ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2	ՀՀ, ք.Երևան, Լեո 12
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
հ/հ 11500166513800	Հ/Հ 163008142792
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 02205001
	էլ. հասցեն՝ medtechservice@mail.ru
	Հեռ. (010) 53 36 30, (010) 53 36 50
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան	Տնօրեն՝ Ա.Մանուկյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 15 » « 02 » 2018թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/16-1-1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդ-հանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	33151160	Լազերային քարափշրման սարքի լրակազմ	Richard Wolf GmbH, Գերմանիա	Նայել ստորև կցված Հավելվածի N 1	հատ	28.400.000,00	28.400.000,00	1	ք.Երևան, Հերացի 58	1	Նախատեսվում է ձեռք բերել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում
2	33161110	Ֆիբրոուրետրոռենոսկոպ	Richard Wolf GmbH, Գերմանիա	Նայել ստորև կցված Հավելվածի N 2	հատ	4.360.000,00	4.360.000,00	1	ք.Երևան, Հերացի 58	1	Նախատեսվում է ձեռք բերել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում
3	33161110	Նեֆրոսկոպ	Richard Wolf GmbH, Գերմանիա	Նայել ստորև կցված Հավելվածի N 3	հատ	5.250.000,00	5.250.000,00	1	ք.Երևան, Հերացի 58	1	Նախատեսվում է ձեռք բերել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում

4	33161110	Ռեզեկտոսկոպի համար նախատեսված տելեսկոպներ՝ 12° / 30°	Richard Wolf GmbH, Գերմանիա	Նայել ստորև կցված Հավելվածի N 4	հատ	1.785.000,00	1.785.000,00	1	ք.Երևան, Հերացի 58	1	Նախատեսվում է ձեռք բերել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում
5	33161120	Բազմակի օգտագործման բիպոլյար կտրող էլեկտրոդ	Richard Wolf GmbH, Գերմանիա	Նայել ստորև կցված Հավելվածի N 5	հատ	2.280.000,00	2.280.000,00	25	ք.Երևան, Հերացի 58	25	Նախատեսվում է ձեռք բերել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ							42.075.000,00				

*Պարտադիր պայման է՝ ապրանքի չօգտագործված լինելը:

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդտեխսերվիս» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Լեո 12
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008142792
ՀՎՀՀ 02205001
էլ. հասցեն՝ medtechservice@mail.ru
Հեռ. (010) 53 36 30, (010) 53 36 50
Տնօրեն՝ Ս.Մանուկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված

Հ/Հ	Անվանում	Տեխնիկական բնութագիր*		
		Բաղադրիչներ	Բաղադրիչների տեխնիկական բնութագիր	Բաղադրիչների քանակ
1	**Լազերային քարափշրման սարքի լրակազմ**	Լազերային քարափշրման բազմաֆունկցիոնալ սարք	Լազերային քարափշրման բազմաֆունկցիոնալ սարք, որը կարելի է կիրառել ինչպես որոլոգիայի, այնպես էլ ՔԿԱ, վիրաբուժության, պլաստիկ վիրաբուժության, արթրոսկոպիկ, գինեկոլոգիական, մաշկաբանական և այլ բնագավառներում: Լազերային սարքը հոլմիում-յագ (Holmium-YAG) տիպի է, հատուկ նախատեսված բաց, լապարոսկոպիկ, էնդոսկոպիկ վիրահատությունների համար: Լազերի միջոցով կատարվի կտրում, ռեզեկցիա, աբլացիա, վապորիզացիա, հեմոստասիս փափուկ հյուսվացքների համար: Օգտագործվում է նաև գաստերոէնտերոլոգիայի և թոքային դիսեկտոմիայի ոլորտներում: Նախատեսված է ընդհանուր վիրաբուժության կամ էնդոսկոպիայի հետ համատեղ կամ ուղղակիորեն օգտագործման համար, էնդոսկոպի հետ կամ ուղիղ լազերի բռնակով: Ուրոլոգիայում օգտագործվում է ապակենտրոնացված երիկամների քարերի, միզապարկի քարերի, նեղացումների համար աբլացիայի ablate, փոքր ուռուցքների և կոնդիլոմաների վապորիզացիայի դեպքերում: Լազերը Holmium-YAG տիպի է: Ալիքի երկարությունը փոխանցվում է մանրաթելային ալիքի ուղությամբ (ապակյա մանրաթել): **Լազերի նկարագրությունը** Լազերի տեսակը՝ Ho:YAG Ալիքի երկարությունը՝ 2100 նանոմետր Մաքսիմալ հզորությունը՝ 30 Վատ Էներգիայի իմպուլսները՝ 2.0 Ջ-ից մինչև 4,0 Ջ Օպերացիայի վիճակը՝ միանվագ կամ բազմանվագ իմպուլսներով Իմպուլսների տևողությունը՝ 150 մկ/վ մինչև 800 մկ/վ Կրկնվող չափիչը՝ 3 Հց-ից մինչև 25 Հց Լազերային մանրաթելային թվային բացվածք՝ NA=0,22 Խոնավության աստիճանը՝ 30%-85%	1

			Ճնշումը՝ 800 hPa –ից մինչև 1060 hPa Սառեցման համակարգը ինտեգրացված ջրային համակարգի է՝ ջրային/օդային ջերմափոխանակումով: Սի ճառագայթի հաղորդումը կատարվում է օպտի մանրաթելային համակարգով: Ուղիղ ճառագայթը լազերային դիոդ է, կանաչ 532 նմ (կարգավորվող) և 5 մվտ: Պաշտպանության աստիճանը հեղուկի ներթափանցման դիմաց՝ IP20 տիպի: Պաշտպանության աստիճանը էլեկտրական շոկի դիմաց՝ BF տիպի Պաշտպանության տիպը էլեկտրական շոկի դիմաց՝ Class I Վիրահատության ռեժիմը՝ շարունակական: Աշխատանքային ջերմաստիճանը՝ 10°C-ից մինչև 30°C: Պահպանման մինիմալ ջերմաստիճանը՝ 5°C: Պահպանման մաքսիմալ ջերմաստիճանը՝ 40°C: Ցանցի ապահովում է 100-120 Vac: 50/60 Հց: 16 Ա և 200-240 Vac: 50/60Հց: 10 Ա: Լազերն ունի բարձրորակ հեղուկաբյուրեղային սենսորային էկրան, աշխատում է (200, 272, 365, 550, 800, 1000) մկ/վ չափով ստերիլ, միանգամյա կամ բազմակի օգտագործման լազեր ֆիբրայով: Ունի լազերի ճառագայթի հրատապ անջատման կոճակ: Սարքի ամբողջական քաշը՝ 60 կգ Սարքի չափսերը՝ 260 x 840 x 920 մմ Ունի ավտոմատ կարգավորող լազերի վերահսկման էկրան: Ունի լազերի էներգիայի իմպուլսների արժեքի ընտրություն: Ունի ձայնային կարգավորումների կառավարման վահանակի հասանելիություն: Ընտրված հաճախականության իմպուլսների ռեժիմի արժեքի փոփոխման հասանելիություն կառավարման վահանակի վրա: Սենսորային էկրանի առկայություն՝ 8.4″ չափսի, որի վրա ցուցադրվում է լազերային մանրաթելի տրամագիծը: Սենսորային էկրանի վրա կա բազմալեզու մենյուի ընտրության հնարավորություն: Սենսորային էկրանի վրա կա ելքային հզորության արժեքը: Պատրաստ/Standby կոճակի առկայություն: Էկրանի վրա կա հաղորդագրությամբ տարածք: Հաճախականության տիրույթի հսկողություն՝ էկրանի միջոցով, էներգիայի տիրույթի հսկողություն՝ էկրանի միջոցով:	

			Էկրանի վրա 4 ռեժիմի ընտրության առկայություն (լիտոտրիպսիա, աբլացիա, կուագուլացիա, քարի մանրացման ֆունկցիա): 'Տագնապ' ազդանշանի նկարագրություն: Ունի ջրի ջերմաստիճանի, ջրի հոսքի, լազերայի մանրաթելի միացման, էներգիայի ազդանշաններ: Սարքի հետ կա դռան միացման փլագ լազերի ակտիվացման և չեղարկման համար, ջրի ֆիլտեր, լազերային պաշտպանիչ ակնոցներ՝ հատուկ ներկայացված լազերի համար, ունիվերսալ է, թեթև, պլաստիկ լինզաներով: Օպտիկամանրաթելային շերտազատելու գործիք: Կերամիկական մկրատ՝ նախատեսված լազերային օպտիմանրաթելերի երկարությունը կարճացնելու համար: Գործիքային բանալի: Ունի ոտնակ, ոտնակի մալուխի երկարությունը՝ 3 մ:	
		Լազերի մանրաթել 1	Երկարությունը՝ Ø 550μM, միջուկի տրամագիծը՝ 550μm, ստերիլ է, նախատեսված բազմակի օգտագործման համար: Համատեղելի է վերը պահանջված լազերային սարքի հետ, ինչպես նաև Richard WOLF լազերային SHARK ռեզեկտոսկոպիկ հավաքի հետ:	2
		Լազերի մանրաթել 2	Երկարությունը՝ Ø 272μM, միջուկի տրամագիծը՝ 272μm, ստերիլ է, նախատեսված բազմակի՝ առնվանզ 10 օգտագործման համար: Համատեղելի է վերը նշված լազերային սարքի, ինչպես նաև Richard WOLF լազերային SHARK ռեզեկտոսկոպիկ հավաքի հետ:	2
		Քար հավաքող զամբյուղ 1	Բարակ 4D տեսակի: Չափսը՝ 1.8 ֆր, ունի 4 լար, երկարությունը՝ 120սմ, ցանցի երկարությունը՝ 15մմ, ցանցի տրամագիծը՝ Ø 11 մմ, ստերիլ է, ունի 360 աստիճան պտտվելու հնարավորություն:	1
		Քար հավաքող զամբյուղ 2	Պարուրաձև 4D տեսակի, ալիքաձև տեսքով: Չափսը՝ 2.5ֆր, ունի 4 լար, երկարությունը՝ 90սմ, ցանցի երկարությունը՝ 30մմ, ցանցի տրամագիծը՝ Ø 12մմ, ստերիլ է, ունի 360 աստիճան պտտվելու հնարավորություն:	1
		Բոլոր գործիքները և սարքերը ունեն ISO9001, ISO13485, CE սերտիֆիկատներ: *-ուսուցումը կատարվում է գործիքներ և սարքվորումներ առաջարկող նույն ընկերության սերտիֆիկացված մասնագետի կողմից:* *-ընկերությունն ապահովում է 12 ամսվա երաշխիքային սպասարկում:* *Գործարանի կողմից ավտորիզացիոն նամակի առկայություն:*		

2	Ֆիբրո ուրետրոռենոսկոպ	Ֆիբրո ուրետրոռենոսկոպ 1	Ֆիբրո ուրետրոռենոսկոպն ըստ Մարբրգերի և ունի առանձին օկուլար: Նախատեսված է լազերային, ուլտրաձայնային, էլեկտրոհիդրավլիկ կամ բալիստիկ քարափշրման համար: Ունի ռիգիդ գործիքների համար նախատեսված ուղիղ աշխատանքային կանալ: Ունի ճկվող գործիքների օգտագործման հնարավորություն կամ երկու տարբեր գործիքների՝ ինչպիսիք են լազերային մանրաթելի կամ էլեկտրոհիդրավլիկ տվիչի և քար հավաքող զամբյուղի ստաբիլացման և քարերի վերցման հնարավորություն: Ունենա օվալ իրիգացիա, գործիքային կանալներ, ավտոմատ փական գործիքների ներմուծման համար: Պետք է պատրաստված լինի չժանգոտվող պողպատից: Աշխատանքային երկարությունը՝ 430մմ Ընդհանուր երկարությունը՝ 600մմ Նախատեսված է 4մմ-ից ոչ ավել 12 աստիճան օպտիկաների համար: Տրամագիծը՝ 8 ֆր Իրիգացիայի և գործիքների կանալը՝ 5.2 x 6.2 ֆր Աքսեսուարների կանալը՝ 1x5 կամ 2x3 ֆր Ուրետրոռենոսկոպը կիսարիգիդ է: Ունի 134 C/273 F աստիճանի ներքո ավտոկլավման հնարավորություն: Տվյալ Ֆիբրո ուրետրոռենոսկը համատեղելի է RICHARD WOLF ընկերության ENDOCAM Performance HD կամերայի գլխիկի հետ: Սարքը լազերային Holmium-YAG տիպի է, սուպրավեզիկուլյար քարափշրման համար էֆֆեկտիվ աշխատանքի համար:	1
		Ֆիբրո ուրետրոռենոսկոպի համար նախատեսված հատուկ բռնակ	Բռնակի ընդհանուր երկարությունը՝ 67մմ: Բռնակը համատեղելի է և միացվի Click մեխանիզմով վերը նշված ուրետրոռենոսկոպի հետ: Գերամուր է, կարծր, թեթև, հրակայուն և բարձր տեխնոլոգիայով պատրաստված նյութից, որը հեշտությամբ ստերիլիզացվում է, ենթարկվում է դեզինֆեկցիայի առանց որակական կամ զուտային փոփոխությունների: Բռնակը բաց տիպի է, ունի բթամատի լայն բռնակ: Բռնակը համատեղելի է ֆիբրոուրետրոռենոսկոպի հետ:	1
		Ֆիբրո ուրետրոռենոսկոպի ունիվերսալ մուտքի փեղկավոր փական	Նախատեսված է 1-6 ֆր գործիքների համար, ստերիլ է, նախատեսված է մեկանգամյա օգտագործման համար, քանակը՝ մեկ փաթեթում 5 հատ: Փականը պետք է համատեղելի է ֆիբրոուրետրոռենոսկոպի հետ:	1
		Ստանդարտ պահպանման մեմբրան	Մեմբրանը համատեղելի է ֆիբրոուրետրորենոսկոպի հետ:	1
		Պահպանման մեմբրան՝ փականով	Մեմբրանը պետք է համատեղելի է ֆիբրոուրետրորենոսկոպի հետ:	1

		Մեկուսիչ մեմբրան	Պատրաստված է սիլիկոնից, մեմբրանի չափսը՝ 7,5մմ, պետք է նախատեսված է 1-5մմ գործիքների համար: Երկարությունը՝ 2մմ, մեկուսիչ մեմբրանը համատեղելի է վերը նշված ֆիբրո ուրետրոռենոսկոպի հետ, նախատեսված է բազմակի օգտագործման համար, քանակը՝ մեկ փաթեթում10 հատ: Մեմբրանը համատեղելի է ֆիբրոուրետրոռենոսկոպի հետ:	1
		Ապակեմանրաթելային մալուխ	Երկարությունը՝ 1.8 մետր, տրամագիծը՝ 2.5մմ: Մալուխը համատեղելի է ուրետրոռենոսկոպի և Richard Wolf ընկերության լույսի Endolight LED 2.2 աղբյուրի հետ:	1
		Սեղմիչ ներդիր 1	Սուր ատամնավոր տիպի է, տրամագիծը՝ 5 ֆր: Աշխատանքային երկարությունը՝ 550մմ, երկակի շարժումով, սեղմիչն ունի իրիգացիայի միացման հնարավորություն և նախատեսված լինի բազմակի օգտագործման համար: Ներդրվում է և համատեղելի է վերը նշված ֆիբրո ուրետրոռենոսկոպի աշխատանքային կանալների հետ: Պետք է պատրաստված լինի չժանգոտվող պողպատից:	1
		Սեղմիչի ներդիր 2	Ատամնավոր ալիգատոր սեղմիչ, տրամագիծը՝ 5 ֆր: Աշխատանքային երկարությունը՝ 550մմ, երկակի շարժումով, սեղմիչն ունի իրիգացիայի միացման հնարավորություն, և նախատեսված է բազմակի օգտագործման համար: Ներդրվում է և համատեղելի է վերը նշված ֆիբրո ուրետրոռենոսկոպի աշխատանքային կանալների հետ:	1
		Բռնակ սեղմիչների համար	Բռնակն ունի սեղմիչներին արագ՝ մեկ քլիք մեխանիզմով միացվելու և անջատվելու հնարավորություն: Բռնակը նախատեսված է 5 ֆր սեղմիչների համար: Աշխատում է վերը նշված ատամնավոր և սուր ատամնավոր սեղմիչների հետ: Բռնակը պատրաստված է գերամուր, կարծր և չժանգոտվող պողպատից:	1
		Բոլոր գործիքները և սարքերը պետք է ունեն ISO9001, ISO13485, CE սերտիֆիկատներ: *-ուսուցումը կատարվում է գործիքներ և սարքվորումներ առաջարկող նույն ընկերության սերտիֆիկացված մասնագետի կողմից:* *-ընկերությունը ապահովում է 12 ամսվա երաշխիքային սպասարկում:* *Գործարանի կողմից ավտորիզացիոն նամակի առկայություն:*		
3	**Նեֆրոսկոպ**	Նեֆրոսկոպը, որը պատրաստված է չժանգոտվող պողպատից, նախատեսված է քարահեռացման, ուլտրաձայնային լիտոլապաքսիայի և էլեկտրոհիդավլիկ լիտոտրիպսիայի հետազոտությունների համար: Նեֆրոսկոպի հավաքն աշխատում է նաև Holmium-YAG 2100 նանոմետր լազերային սարքի հետ: Նեֆրոսկոպիկ հավաքը բաղկացած է հետևյալ մասերից.		1
		Նեֆրոսկոպի համար նախատեսված տելեսկոպ դիլատոր	Տելեսկոպ դիլատորը 9-27 ֆր, նախատեսված 1 պերկուտան նեֆրստոմիկ տրակտի լայնացման համար: Չափի նշագրման կետավորումը՝ 3 ֆր, ընդհանուր երկարությունը՝ 230մմ: Տելեսկոպ դիլատորը պետք է նախատեսված է բազմակի օգտագործման համար և ունենա 134 C/273 F աստիճանի ներքո ավտոկլավման հնարավորություն:	1

Նեֆրոսկոպի համար նախատեսված բուգի	Բուգին նախատեսված է 15 ֆր դիլատորում երկրորդ մետաղալարը անցկացնելու համար, չափսը՝ 24 ֆր, ունի 134 C/273 F աստիճանի ներքո ավտոկլավման հնարավորություն: Պատրաստված է չժանգոտվող պողպատից:	1
Նեֆրոսկոպի համար նախատեսված 12° օպտիկական վիրահատական տելեսկոպ	Օպտիկայի չափը՝ 20.8 ֆր, տարողունակությունը՝ 3.5մմ, ունի զուգահեռ օկուլյար, պատկերի ցուցադրման աստիճանը՝ 80 աստիճան, աշխատանքային երկարությունը՝ 224մմ, ունի օվալաձև աշխատանքային կանալ, աշխատանքային կանալի տրամագիծը՝ 10.5 ֆր, ընդհանուր երկարությունը՝ 387մմ, ունի հատուկ համակարգ պատկերն ավելի լայն և արդյունավետ դարձնելու համար: Ունի 134 C/273 F աստիճանի ներքո ավտոկլավման հնարավորություն: Տելեսկոպը համատեղելի է RICHARD WOLF ընկերության ENDOCAM Performance HD կամերայի գլխիկի հետ, ինչպես նաև 2.5մմ լայնությամբ և 2.3մ երկարությամբ RICHARD WOLF ընկերության օպտիկամանրաթելային մալուխի հետ:	1
Նեֆրոսկոպի տուբուս	Նեֆրոսկոպի տուբուսի չափը՝ 24 ֆր, աշխատանքային երկարությունը՝ 204մմ, կլոր է, ունի պտտվող stopcock, դիստալ ուղիղ ծայր, շարունակական իրիգացիայի փոխանցիչ, ավտոմատ փակման մեխանիզմ, նախատեսված է բազմակի օգտագործման համար, ունի 134 C/273 F աստիճանի ներքո ավտոկլավման հնարավորություն:	1
Նեֆրոսկոպի համար նախատեսված օբտուրատոր	Նեֆրոսկոպը բաղկացած է խոռոչավոր օբտուրատորից, որի տրամագիծը 24ֆր է, աշխատանքային երկարությունը՝ 229մմ, ներքին տրամագիծը՝ 1.2մմ, արտաքին տրամագիծը՝ 7մմ, կլոր է, կանյուլիռովացված, ունի դիստալ կլոր ծայր և նախատեսված է բազմակի օգտագործման համար, համատեղելի է վերը նշված տուբուսի հետ:	1
Նեֆրոսկոպի ամպլացտուբուս	Չափսը՝ 24.3ֆր, աշխատանքային երկարությունը՝ 150մմ, կլոր է, ունի ֆիքսված իրիգացիայի փական, դիստալ ուղիղ ծայր, նախատեսված է բազմակի օգտագործման համար և համատեղելի է մինչև 24ֆր նեֆրոսկոպների հետ: Ամպլացը համատեղելի է վերը նշված տուբուսի հետ, ունի 134 C/273 F աստիճանի ներքո ավտոկլավման հնարավորություն: Պատրաստված է չժանգոտվող պողպատից:	1
Նեֆրոսկոպի համար նախատեսված հերմետիկ մեմբրանային ֆիքսատոր	Համատեղելի է ներկայացված ամպլացի հետ:	1
Նեֆրոսկոպի համար նախատեսված սեղմիչ 1	Նեֆրոսկոպ ունի Grasping սեղմիչ, որի չափսը 10.5ֆր է, աշխատանքային երկարությունը՝350մմ, ունի իրարից բաժանված երեք կեռիկ և նախատեսված է բազմակի օգտագործման համար: Ունի միկրոմոդուլային համակարգ, 360° պտտվելու կարողություն: Համատեղելի է և ներդրվում է նեֆրոսկոպի աշխատաքային կանալի մեջ:	1

		Նեֆրոսկոպի համար նախատեսված սեղմիչ 2	Սարքն ունի Grasping սեղմիչ, որի չափսը 9ֆր է, աշխատանքային երկարությունը՝ 355մմ: Սեղմիչ ունի ծանրաբեռնվածության պաշտպանիչ բռնակ: Ունի անկյունային դիստալ ծայր: Ունի միկրոմոդուլային համակարգ և ունենա 360° պտտվելու կարողություն: Ատամնավոր է: Համատեղելի է և ներդրվում է նեֆրոսկոպի աշխատաքային կանալի մեջ:	1
		Նեֆրոսկոպի համար նախատեսված սեղմիչ 3	Սարքը հագեցված է Grasping սեղմիչով, որի չափսը 10.5ֆր է, աշխատանքային երկարությունը՝ 350մմ: Սեղմիչն ունի ծանրաբեռնվածության պաշտպանիչ բռնակ, միկրոմոդուլային համակարգ, 360° պտտվելու կարողություն, ատամնավոր է: Համատեղելի է և ներդրվում է նեֆրոսկոպի աշխատաքային կանալի մեջ:	1
		Նեֆրոսկոպի լազերի մանրաթելի համար նախատեսված ուղղորդիչ խողովակ	Չափսը՝ 1000μM և 24ֆր, ունի կողային ուղղորդիչ, դիստալ ուղիղ ծայր, նախատեսված է շարունակական իրիգացիայի, լազերային էնուկլիացիայի և բազմակի օգտագործման համար: Համատեղելի է Richard Wolf նեֆրոսկոպի հետ:	1
		Նեֆրոսկոպի համար նախատեսված վիրահատական նեղացման նշտար	Գործիքն ունի վիրահատական նեղացման նշտար՝ կերամիկական սայրով, 4 ֆր ուրետրիկ կատետորների համար, shark-fin սայրով՝ նախատեսված նեղ ստենոսիսների համար, չափսը՝ 20.5ֆր, նախատեսված է բազմակի օգտագործման համար:	1
		Բոլոր գործիքները և սարքերը ունեն ISO9001, ISO13485, CE սերտիֆիկատներ: *-ուսուցումը կատարվում է գործիքներ և սարքվորումներ առաջարկող նույն ընկերության սերտիֆիկացված մասնագետի կողմից:* *-ընկերությունը ապահովում է 12 ամսվա երաշխիքային սպասարկում:* *Գործարանի կողմից ավտորիզացիոն նամակի առկայություն:*		
4	**Ռեզեկտոսկոպի համար նախատեսված տելեսկոպներ՝ 12° / 30°**	Տելեսկոպ 1	Ունի 12° Ø 4մմ տելեսկոպ, աշխատանքային երկարությունը՝ 297մմ, ընդհանուր երկարությունը՝ 363մմ, ունի հատուկ համակարգ՝ պատկերն ավելի լայն և արդյունավետ դարձնելու համար, կոշտ է: Համատեղելի է Richard Wolf ցիստոսկոպիկ և ռեզեկտոսկոպիկ հավաքների հետ աշխատելու համար:	1
		Տելեսկոպ 2	Ունի 30° Ø 4մմ տելեսկոպ, աշխատանքային երկարությունը՝ 300մմ, ընդհանուր երկարությունը՝ 364մմ, ունի հատուկ համակարգ՝ պատկերն ավելի լայն և արդյունավետ դարձնելու համար, կոշտ է: Համատեղելի է Richard Wolf ցիստոսկոպիկ և ռեզեկտոսկոպիկ հավաքների հետ աշխատելու համար:	1
		Բոլոր գործիքները և սարքերը ունեն ISO9001, ISO13485, CE սերտիֆիկատներ: *-ուսուցումը կատարվում է գործիքներ և սարքվորումներ առաջարկող նույն ընկերության սերտիֆիկացված մասնագետի կողմից:* *-ընկերությունն ապահովում է 12 ամսվա երաշխիքային սպասարկում:* *Գործարանի կողմից ավտորիզացիոն նամակի առկայություն:*		

5	Բազմակի օգտագործման բիպոլյար կտրող էլեկտրոդ	Բազմակի օգտագործման բիպոլյար կտրող էլեկտրոդ, որը նախատեսված է 24/26ֆր տուբուսով շարունակական և պարբերական իրիգացիայով ռեզեկտոսկոպների համար, օգտագործվում է 12/30°, 4մմ օպտիկաների հետ, լուպան կլոր է, մետաղալարը՝ 0.3մմ: Համատեղելի է Richard wolf ընկերության բիպոլյար ռեզեկտոսկոպի հետ: Համատեղելի է Richard Wolf Shark տիպի ռեզեկտոսկոպի հետ: *Գործիքն ունի ISO9001, ISO13485, CE սերտիֆիկատներ:* *-ուսուցումը կատարվում է գործիքներ և սարքվորումներ առաջարկող նույն ընկերության սերտիֆիկացված մասնագետի կողմից:* *-ընկերությունն ապահովում է 12 ամսվա երաշխիքային սպասարկում:* *Գործարանի կողմից ավտորիզացիոն նամակի առկայություն:*

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդտեխսերվիս» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Լեո 12
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008142792
ՀՎՀՀ 02205001
էլ. հասցեն՝ medtechservice@mail.ru
Հեռ. (010) 53 36 30, (010) 53 36 50
Տնօրեն՝ Ս.Սանուկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 15 » « 02 » 2018թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/16-1-1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33151160	Լազերային քարափշրման սարքի լրակազմ	-	-	-	-	28.400.000,00	28.400.000,00	28.400.000,00	28.400.000,00	28.400.000,00	28.400.000,00	28.400.000,00	28.400.000,00	28.400.000,00
2	33161110	Ֆիբրոուրետ բրոնխոսկոպ	-	-	-	-	4.360.000,00	4.360.000,00	4.360.000,00	4.360.000,00	4.360.000,00	4.360.000,00	4.360.000,00	4.360.000,00	4.360.000,00
3	33161110	Նեֆրոսկոպ	-	-	-	-	5.250.000,00	5.250.000,00	5.250.000,00	5.250.000,00	5.250.000,00	5.250.000,00	5.250.000,00	5.250.000,00	5.250.000,00
4	33161110	Ռեզեկտոսկոպի համար նախատեսված տելեսկոպներ՝ 12° / 30°	-	-	-	-	1.785.000,00	1.785.000,00	1.785.000,00	1.785.000,00	1.785.000,00	1.785.000,00	1.785.000,00	1.785.000,00	1.785.000,00
5	33161120	Բազմակի օգտագործման բիպոլյար կտրող էլեկտրոդ	-	-	-	-	2.280.000,00	2.280.000,00	2.280.000,00	2.280.000,00	2.280.000,00	2.280.000,00	2.280.000,00	2.280.000,00	2.280.000,00

ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	-	-	42.075.000,00	42.075.000,00	42.075.000,00	42.075.000,00	42.075.000,00	42.075.000,00	42.075.000,00	42.075.000,00	42.075.000,00

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդտեխսերվիս» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Լեո 12
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008142792
ՀՎՀՀ 02205001
էլ. հասցեն՝ medtechservice@mail.ru
Հեռ. (010) 53 36 30, (010) 53 36 50
Տնօրեն՝ Ա.Մանուկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » « » 2018թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/16-1-1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվա-նումը	տեխնի-կական բնութագրի համառոտ շարա-դրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանա-կացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանա-կացույցի	փաս-տացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանա-կացույցի	փաս-տացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » « » 2018թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/16-1-1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Վաճառողի անվանումը
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն